և զընծայսն յանձն արար Մովսէս և Վարդան վարդապետաց, եւ առաքեաց զնոսա յաշխարհն Ռուսաց։ Գրեաց նաեւ զիր օրհնութեան հանդերձ ընծայիւք առ թագաւորն Վրաց Հերակլ, յորում խնդրէր խնամ տանել Նուիրակացն Երուսաղէմի 'ի մայրաքաղաքն Տփխիս և 'ի սահմանս նորա, զորոյ պատասխանն ընկալաւ։

Յետ այսր ամենայնի և անցանելոյ ամաց ինչ՝ հիւանդացաւ Յովակիմ Պատրիարք և անկաւ 'ի մահիճս և չգըտեալ դարման ցաւոցն վախճանեցաւ, յամի Տեառն 1793 'ի 25 Սեպտեմբերի յաւուր տօնի Վարագայ Ս. Խաչի. եւ յաւուրն երկրորդի ըստ իւրումն արժանաւորութեան թաղեցաւ հանդիսիւ 'ի վանս Ս. Փրկչի ըստ սովորութեան 'ի կարգս Պատրիարքաց, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան Աթոռոյն Երուսաղէմի ամս 18, բազում վըշտօք և տառապանօք յերեսաց դառնութեան ժամանակին. յաւուրս սորա չնչմարի այլ երեւելի դէպք ինչ ընդ օտարս, բաց 'ի խնդրոյ գերեզմանատան ընդ Լատինս. այլ միայն զբաղեալ 'ի յանձանձանս վանական իրաց, և փոյթ ընդունել զփոխանակագիրս Բդեշխից, դատաւորաց, մաքսապետաց և այլոց 'ի հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, որոց վասն կրեաց բազում նեղութիւնս և աղքատութիւնս, մանաւանդ 'ի հատուցանել զտարեկան սահմանեալ հարկս Կուսակալացն Դամասկոսի եւ այլազգեացն Երուսաղէմի։ Եւ այս տագնապ և դառնութիւն չէր միայն 'ի վերայ Հայոց, այլ նաեւ 'ի վերայ Յունաց եւ Լատինաց. զի Հայք պարտաւորեալ էին միշտ առ երկիւղի ընթացակից լինել նոցա, զի մի վտանգեսցին, որպէս երբեմն պատահեալ է. թէպէտ տառապանօք և աղքատութեամբ, որպէս է տեսանել 'ի բովանդակ նամականիս Յովակիմ Պատրիարքի, գրեալ առ ազգային Կոստանդինուպոլսոյ, յորս ստէպ խնդրէր հնարել սակաւ ինչ դիւրութիւն նեղութեանցն։

Ասի զամանէ իբրեւ անգիր աւանդութիւն՝ թէ 'ի յետին ամս Պատրիարքութեան իւրոյ կացին աչքն 'ի տեսանելոյ ամս իբրեւ 7. և այս յայտնի եւս տեսանի 'ի ստորագրութեանց նամակացն։ Ընտիր եւ պատուական է յեկեղեցական անօթս Ս. Յակոբայ սորին եպիսկոպոսական թագն հանդերձ վակասիւ, հեռեալ մարգարտով և զար-